

5.11. 2006թ. հունիս ամսվա շրջակա բնական միջավայրի աղտոտվածության մոնիտորինգ

Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության տեղեկատվության, հանրապետության բնական շրջակա միջավայրը 2006թ. հունիսին ունեցել է հետևյալ բնութագիրը:

Օդային ավազանի որակի մոնիտորինգ: Հունիսին օդային ավազանի դիտարկումներ կատարվել են հանրապետության Երևան, Գյումրի, Վանաձոր, Հրազդան, Ալավերդի և Արարատ քաղաքներում տեղակայված 13 մշտական լաբորատոր դիտակայանների միջոցով:

Վերցվել է օդի 3253 փորձանմուշ, որոշվել են մթնոլորտն աղտոտող վերահսկվող նյութերի կոնցենտրացիաները:

- **ք.Երևանում** վերցվել է օդի 1644 փորձանմուշ: Փոշու միջին ամսական սահմանային թույլատրելի կոնցենտրացիան (ՍԹԿ) գերազանցվել է 2.1, ծծմբի երկօքսիդինը և գետնամերձ օզոնինը՝ 2.2-ական, ազոտի երկօքսիդինը՝ 2.3, ազոտի օքսիդինը՝ 1.3, բենզոլինը՝ 2.9 անգամ: Ազոտի երկօքսիդի միանվագ առավելագույն ՍԹԿ-ն գերազանցվել է 4.9, ազոտի օքսիդինը՝ 3.1, տոլուոլինը՝ 1.7 անգամ: Մայիս ամսվա համեմատ ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան նվազել է 1.2, բենզոլինը՝ բարձրացել 8.1 անգամ:

Վերահսկվող աղտոտիչների առավելագույն և միջին ամսական կոնցենտրացիաները ք.Երևանի մթնոլորտում, 2006թ. հունիս

Աղտոտիչ նյութերի անվանումը	Կոնցենտրացիաները, մգ/մ ³	
	առավելագույն	միջին ամսական
Փոշի	-	0.31
Ծծմբի երկօքսիդ	0.36	0.11
Ազոտի երկօքսիդ	0.420	0.093
Ազոտի օքսիդ	1.23	0.08
Գետնամերձ օզոն	0.140	0.067
Բենզոլ	1.307	0.293
Տոլուոլ	1.020	0.451
Քսիլոլ	-	-
Էթիլբենզոլ	-	-
Քլորոպրեն	-	-

- **ք.Գյումրիում** փոշու պարունակության որոշման համար վերցվել է օդի 26 փորձանմուշ: Փոշու միջին ամսական ՍԹԿ-ն գերազանցվել է 2.7 անգամ: Մայիս ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիան բարձրացել է 1.2 անգամ:
- **ք.Վանաձորում** վերցվել է օդի 1014 փորձանմուշ: Փոշու միջին ամսական ՍԹԿ-ն գերազանցվել է 1.5, ծծմբի երկօքսիդինը և բենզոլինը՝ 1.4-ական, ազոտի երկօքսիդի միանվագ առավելագույն ՍԹԿ-ն՝ 1.3, տոլուոլինը՝ 2.3 անգամ: Մայիս ամսվա համեմատ փոշու և բենզոլի միջին ամսական կոնցենտրացիաները նվազել են, համապատասխանաբար՝ 1.5 և 1.2 անգամ, ծծմբի երկօքսիդինը՝ բարձրացել 1.4 անգամ:

Վերահսկվող աղտոտիչների առավելագույն և միջին ամսական կոնցենտրացիաները ք.Վանաձորի մթնոլորտում, 2006թ. հունիս

Աղտոտիչ նյութերի անվանումը	Կոնցենտրացիաները, մգ/մ ³	
	առավելագույն	միջին ամսական
Փոշի	-	0.23
Ծծմբի երկօքսիդ	0.23	0.07
Ազոտի երկօքսիդ	0.113	0.028
Ազոտի օքսիդ	0.06	0.02
Բենզոլ	0.221	0.136
Տոլուոլ	1.395	0.259
Քսիլոլ	-	-
Էթիլբենզոլ	-	-

- **ք.Հրազդանում** ցեմենտի փոշու պարունակության որոշման համար վերցվել է օդի 26 փորձանմուշ: Փոշու միջին ամսական ՍԹԿ-ն գերազանցվել է 3.4 անգամ: Մայիս ամսվա համեմատ որոշվող նյութերի միջին ամսական կոնցենտրացիաների էական փոփոխություն չի դիտվել:
- **ք.Ալավերդում** վերցվել է օդի 517 փորձանմուշ: Ծծմբի երկօքսիդի միջին ամսական ՍԹԿ-ն գերազանցվել է 12.4, փոշու և ազոտի երկօքսիդինը՝ 1.3-ական անգամ: Ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միանվագ առավելագույն ՍԹԿ-ներն գերազանցվել են, համապատասխանաբար՝ 2.0 և 1.2 անգամ: Մայիս ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիան բարձրացել է 1.3 անգամ:

Վերահսկվող աղտոտիչների առավելագույն և միջին ամսական կոնցենտրացիաները ք.Ալավերդու մթնոլորտում, 2006թ. հունիս

Աղտոտիչ նյութերի անվանումը	Կոնցենտրացիաները, մգ/մ ³	
	առավելագույն	միջին ամսական
Փոշի	-	0.20
Ծծմբի երկօքսիդ	1.02	0.62
Ազոտի երկօքսիդ	0.100	0.052
Ազոտի օքսիդ	0.05	0.03

- **ք.Արարատում** ցեմենտի փոշու պարունակության որոշման համար վերցվել է օդի 26 փորձանմուշ: Փոշու միջին ամսական ՍԹԿ-ն գերազանցվել է 3.2 անգամ: Մայիս ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիան նվազել է 1.2 անգամ:

Սակերևութային ջրերի որակի մոնիտորինգ: Հունիսին մակերևութային ջրերի մոնիտորինգը կատարվել է հանրապետության 40 գետերի, Ազատի, Արփիլճի, Ապարանի, Ախուրյանի և Կեչուտի ջրամբարների, Երևանյան և Սևանա լճերի 113 դիտակետերից: Վերցվել է 122 փորձանմուշ, որոշվել է 20-22-ական ցուցանիշ:

- **Դեբեդ գետի ավազան:** Փամբակ, Դեբեդ, Չորագետ, Մարցիգետ և Ախթալա գետերից վերցված փորձանմուշներում գերազանցվել են միտրիտ և ամոնիում իոնների, ԹԿՊ₅-ի, իսկ Ախթալա գետի գետաբերանի հատվածքում՝ նաև սուլֆատ իոնի ՍԹԿ-ն: Նիտրիտ իոնի ՍԹԿ-ն Դեբեդ և Փամբակ գետերից վերցված փորձանմուշներում գերազանցվել է 1.3-4.6-ական, ամոնիում իոնինը՝ 1.2-2.1-ական (Փամբակ գետում՝ Վանաձոր քաղաքից ներքև ընկած հատվածքից վերցված փորձանմուշում՝ 6.6 անգամ), ԹԿՊ₅-ինը՝ 1.1-1.7-ական անգամ: Ախթալա գետից վերցված փորձանմուշներում սուլֆատ իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է 5.0 անգամ, իսկ կախված մասնիկների կոնցենտրացիան դիտվել է 1218.0 մգ/դմ³:
- **Աղստև գետի ավազան:** Աղստև և Գետիկ գետերից վերցված փորձանմուշներում միտրիտ իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է 2.8-3.5-ական, ամոնիում իոնինը՝ 1.6-2.3-ական, ԹԿՊ₅-ինը՝ 1.1-1.6-ական անգամ: Որոշված մյուս ցուցանիշները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:
- **Սևջուր գետի ավազան:** Սևջուր, Քասաղ, Գեղարոտ, Հախվերդ գետերից և Ապարանի ջրամբարից վերցված փորձանմուշներում գերազանցվել են միտրիտ և ամոնիում իոնների ՍԹԿ-ները, համապատասխանաբար՝ 1.4-3.8-ական և 1.8-1.9-ական անգամ: Որոշված մյուս ցուցանիշները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:
- **Հրազդան գետի ավազան:** Հրազդան, Մարմարիկ, Գետառ գետերից և Երևանյան լճից վերցված փորձանմուշներում գերազանցվել են լուծված թթվածնի, ԹԿՊ₅-ի, ամոնիում և միտրիտ իոնների ՍԹԿ-ները: Հրազդան գետի Դարբնիկ գյուղի մոտ ընկած հատվածքում դիտվել է լուծված թթվածնով արտակարգ բարձր աղտոտվածություն՝ լուծված թթվածնի կոնցենտրացիան դիտվել է 1.85 մգ/դմ³, իսկ գետաբերանում՝ թթվածնային ռեժիմի անբավարարություն, լուծված թթվածնի պարունակությունը կազմել է 4.93 մգ/դմ³: Հրազդան գետի Դարբնիկ գյուղի և Գետառի գետաբերանի մոտ ընկած հատվածքներում դիտվել է բարձր աղտոտվածություն՝ ամոնիում իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է, համապատասխանաբար՝ 29.8 և 23.4 անգամ: Վերցված փորձանմուշներում միտրիտ իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է 1.6-9.6, ամոնիում իոնինը՝ 3.2-3.5, ԹԿՊ₅-ինը՝ 1.2-4.9 անգամ:

- **Ազատ գետի ավազան:** Ազատ գետի գետաբերանից վերցված փորձանմուշում նիտրիտ և ամոնիում իոնների ՍԹԿ-ները գերազանցվել են, համապատասխանաբար՝ 8.4 և 6.4 անգամ: Ազատի գետից և Ազատի ջրամբարից վերցված փորձանմուշներում որոշված մյուս ցուցանիշները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:
- **Ախուրյան գետի ավազան:** Ախուրյան, Կարկաչուն գետերից, Արփիլձի և Ախուրյանի ջրամբարներից վերցված փորձանմուշներում նիտրիտ իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է 1.4-3.5-ական անգամ (Կարկաչուն գետի գետաբերանից ներքև ընկած հատվածքում՝ 8.0 անգամ): Ախուրյան գետի Գյումրի քաղաքից ներքև և Կարկաչուն գետի գետաբերանի մոտ ընկած հատվածքներում ամոնիում իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է համապատասխանաբար 5.4 և 2.2 անգամ: Կարկաչուն գետի գետաբերանում գերազանցվել է նաև ԹՔՊ-ի ՍԹԿ-ն՝ 1.4 անգամ: Որոշված մյուս ցուցանիշները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:
- **Արփա գետի ավազան:** Արփա, Եղեգիս գետերից և Կեչուտի ջրամբարից վերցված փորձանմուշներում նիտրիտ իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է 1.6-2.6-ական անգամ: Եղեգիս գետի Շատին գյուղից ներքև ընկած հատվածքից վերցված փորձանմուշում ԹԿՊ-ի ՍԹԿ-ն գերազանցվել է 1.2 անգամ: Արփա գետի Վայք քաղաքից վերև ընկած հատվածքում 1.1 անգամ գերազանցվել է ԹՔՊ-ի ՍԹԿ-ն:
- **Ողջի գետի ավազան:** Ողջի, Արծվանիկ և Գեղի գետերից վերցված փորձանմուշներում գերազանցվել են միայն նիտրիտ իոնի և ԹՔՊ-ի կոնցետրացիաները: Ողջի գետի Կապան քաղաքից ներքև և Արծվանիկ գետի պոչամբարից վերև ընկած հատվածքներում նիտրիտ իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է, համապատասխանաբար՝ 1.1 և 1.6 անգամ: Գեղի գետի Աջաբաջ գյուղից վերև ընկած հատվածքից վերցված փորձանմուշում ԹՔՊ-ի ՍԹԿ-ն գերազանցվել է 1.2 անգամ: Որոշված մյուս ցուցանիշները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:
- **Որոտան գետի ավազան:** Որոտան, Գորիսգետ և Սիսիան գետերից վերցված փորձանմուշներում գերազանցվել են նիտրիտ և ամոնիում իոնների ու ԹԿՊ-ի ՍԹԿ-ները: Որոտան գետի Սիսիան քաղաքից ներքև և Գորիսգետի Գորիս քաղաքից ներքև ընկած հատվածքներում նիտրիտ իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է համապատասխանաբար՝ 3.6 և 9.6 անգամ: Որոտան գետի Գորայք գյուղից վերև և Սիսիան գետի գետաբերանի մոտ ընկած հատվածքներում ամոնիում իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է, համապատասխանաբար՝ 2.1 և 3.0 անգամ: Գորիսգետ գետից վերցված փորձանմուշներում ԹԿՊ-ի ՍԹԿ-ն գերազանցվել է 1.3-1.4 անգամ: Որոշված մյուս ցուցանիշները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:
- **Սևանա լճի ավազան:** Սևանա լճի ավազանի գետերից վերցված փորձանմուշներում գերազանցվել են ամոնիում և նիտրիտ իոնների ու ԹԿՊ-ի ՍԹԿ-ները: Մասրիկ գետի Վերին Շորժա գյուղից վերև ընկած հատվածքից վերցված փորձանմուշում ամոնիում իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է 2.1, իսկ գետաբերանից վերցված փորձանմուշում՝ նիտրիտ իոնի ՍԹԿ-ն՝ 1.5 անգամ: Չկնազետ գետի գետաբերանի հատվածքում ԹԿՊ-ի ՍԹԿ-ն գերազանցվել է 1.1 անգամ: Որոշված մյուս ցուցանիշները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:
- **Արաքս գետ:** Արաքս գետի Գրազդան գետի թափման կետից ներքև ընկած հատվածքում դիտվել թթվածնային ռեժիմի անբավարարություն՝ լուծված թթվածնի պարունակությունը կազմել է 5.64 մգ/լ³: Արաքս գետի 6 դիտակետերից (Սուրմալու գյուղի դիմաց, Գրազդան գետի թափման կետից վերև և ներքև, Արմաշ գյուղից ներքև, Ագարակ քաղաքից վերև և ներքև ընկած հատվածքներից) վերցված փորձանմուշներում նիտրիտ իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է 1.6-3.8-ական անգամ: Արմաշ գյուղից ներքև ընկած հատվածքից վերցված փորձանմուշում ԹԿՊ-ի ՍԹԿ-ն գերազանցվել է 2.1, իսկ Ագարակ քաղաքից վերև ընկած հատվածքից վերցված փորձանմուշում՝ ԹՔՊ-ի ՍԹԿ-ն՝ 1.2 անգամ: Որոշված մյուս ցուցանիշները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:
- **Վեղի և Սեղրիգետ գետեր:** Վեղի գետի Ուրցաձոր գյուղից վերև ընկած հատվածքից վերցված փորձանմուշում ԹԿՊ-ի ՍԹԿ-ն գերազանցվել է 1.1 անգամ: Վերցված փորձանմուշում որոշված մյուս ցուցանիշները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

Սակերևութային ջրերի աղտոտվածության վիճակը, 2006թ. հունիս

Ջրային օբյեկտի անվանումը	Դիտակետի համարը	Դիտակետը (հատվածքը)	ՍԹԿ-ն գերազանցող միացությունների կոնցենտրացիաները						
			Լուծված թթվածին (ՍԹԿ՝ 6.0 մգ/լմ ³ -ից ոչ պակաս)	ԹԿՊ ₅ (ՍԹԿ՝ 3.0 մգ/լմ ³)	Նիտրիտ իոն (ՍԹԿ՝ 0.024 գ/լմ ³)	Ամոնիում իոն (ՍԹԿ՝ 0.39 մգ/լմ ³)	Նիտրատ իոն (ՍԹԿ՝ 9.0 մգ/լմ ³)	Սուլֆատ իոն (ՍԹԿ՝ 100.0 մգ/լմ ³)	ԹՔՊ (ՍԹԿ՝ 30.0 մգ/լմ ³)
Փամբակ	1	Հարթագյուղ գյուղից 0.5 կմ վերև	-	4.05	-	0.59	-	-	-
	2	Սպիտակ քաղաքից 0.5 կմ ներքև	-	4.74	-	0.63	-	-	-
	3	Վանաձոր քաղաքից 0.6 կմ վերև	-	5.19	0.032	0.80	-	-	-
	4	Վանաձոր քաղաքից 4.5 կմ ներքև	-	5.22	0.091	2.56	-	-	-
Դեբեդ	5	Մարցիգետի թափման կետից 0.5 կմ ներքև	-	3.92	0.111	0.46	-	-	-
	6	Այրում գյուղից 0.5 կմ վերև	-	4.18	0.051	-	-	-	-
	7	ՀՀ պետական սահմանի մոտ	-	3.36	0.058	-	-	-	-
Չորագետ	10	Գետաբերան	-	-	-	-	-	-	-
Մարցիգետ	13	Գետաբերան	-	-	-	-	-	-	-
Ախթալա	14	Գետաբերան	-	-	-	-	-	496.0	-
Աղստև	15	Դիլիջան քաղաքից 1.2 կմ վերև	-	3.72	-	0.90	-	-	-
	16	Դիլիջան քաղաքից 0.5 կմ ներքև	-	3.23	0.085	0.61	-	-	-
	17	Իջևան քաղաքից 1 կմ վերև	-	3.52	0.066	-	-	-	-
	18	Իջևան քաղաքից 9 կմ ներքև	-	4.69	-	-	-	-	-
Արաքս	25	Սուրմալու գյուղի դիմաց	-	-	0.038	4.66	-	-	-
	26	Հրազդան գետի թափման կետից վերև	-	-	0.048	-	-	-	-
	27	Հրազդան գետի թափման կետից ներքև	5.64	-	0.091	-	-	-	-
	28	Արմաշ գյուղից 0.5 կմ ներքև	-	6.42	0.062	-	-	-	-
	29	Ագարակ քաղաքից 2 կմ հարավ	-	-	-	-	-	-	36.0
	34	Գյումրի քաղաքից 5 կմ ներքև	-	-	0.084	2.11	-	-	-
	35	Երվանդաշատ գյուղից 0.5 կմ ներքև	-	-	0.034	-	-	-	-
Կարկաչուն	38	Ղարիբջանյան գյուղից 1 կմ ներքև	-	-	0.192	0.86	-	-	41.0
Սևջուր	40	Վաղարշապատ քաղաքից 10 կմ հարավ	-	-	0.048	-	-	-	-
	41	Վաղարշապատ քաղաքից 11 կմ հարավ-արևելք	-	-	0.091	-	-	-	-
	42	Ռանչպար գյուղից 0.5 կմ ներքև	-	-	0.053	-	-	-	-
Քասախ	43	Ապարան քաղաքից 0.5 կմ վերև	-	-	-	0.71	-	-	-
	44	Ապարան քաղաքից 0.5 կմ ներքև	-	-	0.034	-	-	-	-
Գեղարոտ	47	Գետաբերան	-	-	0.038	-	-	-	-
	49	Գետաբերան	-	-	0.048	0.76	-	-	-

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

Ջրային օբյեկտի անվանումը	Դիտակետի համարը	Դիտակետը (հատվածքը)	ՍԹԿ-ն գերազանցող միացությունների կոնցենտրացիաները						
			Լուծված թթվածին (ՍԹԿ՝ 6.0 մգ/լմ ³ -ից ոչ պակաս)	ԹԿՊ ₅ (ՍԹԿ՝ 3.0 մգ/լմ ³)	Նիտրիտ իոն (ՍԹԿ՝ 0.024 մգ/լմ ³)	Ամոնիում իոն (ՍԹԿ՝ 0.39 մգ/լմ ³)	Նիտրատ իոն (ՍԹԿ՝ 9.0 մգ/լմ ³)	Սուլֆատ իոն (ՍԹԿ՝ 100.0 մգ/լմ ³)	ԹՔՊ (ՍԹԿ՝ 30.0 մգ/լմ ³)
Հրազդան	54	Արզնի ՋԷԿ-ից 0.5 կմ ներքև	-	-	0.038	-	-	-	-
	55	Դարբնիկ գյուղի մոտ	1.85	14.8	0.211	11.62	-	-	-
	56	Գետաբերան	4.93	9.6	0.115	1.26	-	-	-
Մարմարիկ	58	Գետաբերան	-	3.6	-	-	-	-	-
Գետառ	59	Գետաբերան	-	-	0.202	9.12	-	-	-
Ձկնագետ	61	Գետաբերան	-	3.3	-	-	-	-	-
Մասրիկ	62	Վերին Շորժա գյուղից 0.5 կմ վերև	-	-	-	0.81	-	-	-
	63	Գետաբերան	-	-	0.036	-	-	-	-
Ազատ	79	Գետաբերան	-	-	0.202	2.51	-	-	-
Վեղի	80	Ուրծածոր գյուղից 0.5 կմ վերև	-	3.26	-	-	-	-	-
Արփա	84	Վայք քաղաքից 0.5 կմ վերև	-	-	-	-	34.0	-	-
	85	Վայք քաղաքից 0.5 կմ ներքև	-	-	0.038	-	-	-	-
	86	Եղեգնածոր քաղաքից 0.5 կմ վերև	-	-	0.038	-	-	-	-
	87	Արենի գյուղից 0.5 կմ ներքև	-	-	0.062	-	-	-	-
Եղեգիս	88	Շատին գյուղից 0.5 կմ ներքև	-	3.65	0.038	-	-	-	-
Ողջի	94	Կապան քաղաքից 6.8 կմ ներքև	-	-	0.026	-	-	-	-
Արծվանիկ	95	Պոչամբարից 0.5 կմ վերև	-	-	0.038	-	-	-	-
Գեղի	97	Աջաբաջ գյուղից 0.5 կմ վերև	-	-	-	-	35.0	-	-
Որոտան	99	Գորայք գյուղից 0.5 կմ վերև	-	-	-	0.81	-	-	-
	101	Սիսիան քաղաքից 2 կմ ներքև	-	-	0.086	-	-	-	-
Սիսիան	104	Գետաբերան	-	-	-	1.16	-	-	-
Գորիսգետ	106	Գորիս քաղաքից 3 կմ վերև	-	3.98	-	-	-	-	-
	107	Գորիս քաղաքից 1.5 կմ ներքև	-	4.26	0.230	-	-	-	-
Ախուրյանի ջրամբար	110	Ամբարտակի մոտ	-	-	0.072	-	-	-	-
Երևանյան լիճ	112	Ամբարտակից գետի հոսանքով ներքև	-	-	0.230	1.36	-	-	-